



միտ ուսումնասիրելու, որ հայոց մամուլը և հայոց ինտելիգենցիան աւելի լաւ են ճանաչում իրանց կուլտուրական և քաղաքացիական պարտաւորութիւնները, քան այդ կարող են ըմբռնել այն ողորմելի գրողները և թերթիւները, որոնք իրանց ամբողջ հայրենասիրութիւնը և ոյժը օտար ազգերին հայհոյելու մէջ են տեսնում, որոնք շնորհք և ոյժ չունենալով պահպանել իրանց ողորմելի գոյութիւնը, սկսում են դրդուել մի հասարակութիւն մի ուրիշ հասարակութեան դէմ, պիտու է նա հաւատարման, թէ պետութեանը վտանգ է սպառնում և իրանք ահա հանդէս են եկել փրկելու հայրենիքը անսպասելի կործանումից...

Եւ ահա հէնց այդ պատճառով, ուսուցիչ խաւարամիտ թերթիւները, որոնք ոչինչ օգուտ չը տուեցին ուսումնասիրողներին, երկար տարիների ընթացքում իրանց այդ հակակրօնի պրօպագանդայով, այդ փնտաւար ուղղութեամբ ահազին միտաւ են տուել, դրդուելով մի ազգութիւն միւսի դէմ թշնամացնելով պետութեան մէջ ապրող մի համայնք մի ուրիշ համայնքի դէմ...

Չարմանալի նմանութիւն ունեն խաւարամիտ լրագրիւնները միմեանց հետ ամեն տեղ և ամեն ժամանակ։ Ինչպէս հայերին մէջ խաւարամիտ մամուլը, իր ողորմելի գոյութիւնը պահպանելու համար, աշխատում է ցոյց տալ, որ հայոց եկեղեցին վտանգի մէջ է և կատաղի թշնամութիւն է սերմանում մի և նոյն ազգութեան պատկանող լուսաւորչական, կաթողիկոս, բողոքական հոգեւորական, այնպէս էլ ուսուցիչ խաւարամիտ մամուլը, ձգտելով ցոյց տալ, որ իրքը կոչված է հայրենիքը վտանգից փրկելու, ամեն կերպ աշխատում է ուսումնասիրելու իրենց միտաւոր դրդուել միտաւորութիւններին, ամեն կերպ աշխատում է ուսումնասիրելու իրենց միտաւոր դրդուել միտաւորութիւններին, ամեն կերպ աշխատում է ուսումնասիրելու իրենց միտաւոր դրդուել միտաւորութիւններին, ամեն կերպ աշխատում է ուսումնասիրելու իրենց միտաւոր դրդուել միտաւորութիւններին...

Եւ զարմանալի այն է, որ այդ խաւարամիտ լրագրիւնները, որ նոյն ստոր հակութիւնները, նոյն փնտաւար ուղղութիւնները...

ունեն թէ հայոց մէջ, թէ Ռուսաստանում, թէ նոյն իսկ Եւրոպայում—միշտ սիրում են յարձակւել միմեանց դէմ, միշտ մէկը սիրում է մեղադրել միւսին այն բանի մէջ, ինչի մէջ որ ինքն էլ մեղաւոր է։

Օրինակ, հայոց խաւարամիտ մամուլը, որ մեր ներքին կեանքում զրգուում է զանազան կրօններին պատկանող, բայց ազգակից հայերին միմեանց դէմ, նոյն այդ խաւարամիտ մամուլը, փրփուրը բերանին մեղադրում է ուսումնասիրող թերթիւնին, թէ ինչու են նրանք զրգուում մի ազգութիւն միւսի դէմ, կամ մի կրօնական համայնք միւսի դէմ։ Զիշտ այդպէս էլ ուսումնասիրող մամուլը, որ ներքին կեանքում զրգուում է մի ժողովուրդ միւսի դէմ, կամ ծաղրում է որ և է ժողովուրդի կրօնական կամ ազգային առանձնայատկութիւնները, Եւրոպայի մասին խօսելիս, փրփուրը բերանին յարձակւում է Եւրոպական յետադէմ խաւարամիտ թերթիւնի վրայ, թէ ինչու նրանք հալածում են պետութեան սահմաններում ապրող այս և այն ազգութիւնը, այս և այն կրօնական համայնքը։

Այո, կրկնում ենք, խաւարամիտ մամուլը, իրեն խաւար, յետադէմ փնտաւար մտքերի ներկայացուցիչ, իբրեւ ազնիւ, անկեղծ զործունէութեան թշնամի, ամեն տեղ և ամեն ժամանակ նոյնն է,—միշտ կեղծ, միշտ փնտաւար, միշտ ստոր ինտսիկաներ զրգուող և միշտ թշնամի այն բոլորին, ինչ որ լուսաւոր է, ինչ որ ազնիւ է, ինչ որ բնական է և յաւիտեական...

ՀԵՌԱՅԻՐ ԼՕՆԻՈՆԻՑ

(Իշխանի գործակալութեան միջոցով)

«Լօնդոնի հայկական ընկերութիւնը զիմեց Կիմբերլէին մի յիշատակագրով, որի մէջ ասում է, թէ Հայաստանում կատարվում են այնպիսի խտրութիւններ և կոտորածներ, որպիսիք տեղի ունէին մի ժամանակ Բոլղարիայում։ Սպանված են 6-ից մինչև 10 հազար մարդիկ, մի քանի հազարիւր կանայք և աղջիկներ բռնաբարվել և հրացանազարկ են եղել։ Երեք հարիւր զիւ-

ղեր կատարելապէս քանջված են, մի քանի մարդկանց կենդանի այրել են։

«Արարայից Standard» լրագրին հաղորդում են, որ թիւրքացի զօրքերը ընդհանուր կոտորածի են ենթարկել Մօնէխի (?) ազգաբնակիչները, և այդ կոտորածի պատճառն այն էր, որ Մօնէխի ազգաբնակիչները չէին կամենում հարկերը վճարել։ Զօրքերի զայուց յետոյ ազգաբնակիչները գէնքը վայր դրեց։ Չը նայելով դրան, նահանգապետը վճռեց շոշափելի կերպով պատժել յանցաւորներին և զօրքերին հրամայեց հրացանազարկ անել ազգաբնակիչներին։ Եւ որովհետեւ ապստամբութեան սկզբնապատճառը 25 գիւղերն էին, այդ պատճառով երեւի մի քանի հազար մարդիկ են կոտորված։

«Բրիտանական հիւպատոսը ճանապարհ ընկաւ դէպի ապստամբութեան տեղը։ Սուլթանին ներկայացրած զեկուցման մէջ նահանգապետը մեղադրում է հիւպատոսին ասելով թէ հիւպատոսն է ապստամբեցնում ազգաբնակիչները և հետեւեալի պատասխանատուութիւնը զրգում է նրա վրայ։

«Լօնդոնի թիւրքացի զեկուցման ուղղած յայտարարի մէջ թիւրքացի կառավարութիւնը յայտնում է, թէ հայ աւազակները և թիւրք զեղըր այրեցին և կողոպտեցին մահաճակատի մի քանի գիւղեր և թէ կանոնաւոր զօրքեր են ուղարկված կարգը վերականգնելու համար։ Կողոպտողները իբր թէ միայն հայերն են եղել։ «Times» լրագրիւր արդարաւի կերպով նկատում է, որ սուլթանը ապստամբութեան տեղը մի քանի յանձնաժողով կուղարկի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՕԼԼԵԳԻԱԼ ՍԿՁԲՈՒՆԻ

I

Յայտնի է, որ Ռուսաստանում, Մեծն Պետերսբուրգի յետոյ, պետական ամբողջ մեծանիւնը վերանորոգվեց և հին, ասիական, միանձնական սկզբունքները տեղ տուեց նոր, քաղաքակրթ իրականութիւնի։

Անհրաժեշտ է, որ ամեն մի

լինդիւր աւելի հիմնաւոր, օրէկ տիւ ու անաչառ կերպով է քննարկում և աւելի ուղիւ վճիռ ստանում, երբ նա մշակվում է կոլեկտիւ հաստատութեան մէջ, ուր համահաւասար ձայն ունեցող անձինք ընտրում են և ձայների առաւելութեամբ վճիռներ կայացնում, քան երբ մի խնդրի ընտրութիւնը և լուծումը մի անձի քմահաճութիւնից է կախված։ Ամեն մի հարց, անցնելով կոլեկտիւ հաստատութեան ընտրութեան բովից, մաքրվում է ու գտնում նեղ, անձնական, քմահաճ յաւելումներ, ինչի կոլեկտիւ հաստատութեան մէջ նախազարդ, առանց միտ անդամների համաձայնութեան, ոչինչ չէ կարող վճռել։

Պետական խաղաքանչիւր պաշտօնեայ, լինի նա մինիստր, թէ նահանգապետ, կամ թէ հոգնոր վարչութեան մէջ՝ առաջնորդ, թէ յաջորդ, թէ էրեւ զօրք մարմին ունի որոշ միանձնական իշխանութիւն, որի սահմանները ճիշդ նախազգված են օրէնքով, սակայն իբրեւ կառավարիչ, նա գործում է զանազան կոլեկտիւ հիմնաւորութիւնների խորհրդակցութեամբ։ Պետական խորհուրդը, մինիստրական կոմիտէները, խորհուրդները, զանազան ճիւղերի զեկուցատմանները, խորհուրդները, նահանգական վարչութիւնները և այլն լոկ ձեռի համար չեն, այլ պետական բարդ մեխանիզմի կանոնաւոր և ուղիւ ընթացք տալու համար, պետական շահերի, երկրի բարօրութեան և արդարութեան չը բռնաբարվելու տեսակետից՝ նրանք իբրեւ անհրաժեշտութիւն են ճանաչված։

Թէ և զանազան պաշտօնեաներ, իբրեւ գործադիր մարմիններ, ունեն որոշ օրէնքով ճիշդ նախազգված միանձնական իշխանութիւն, բայց նրանք խստիւ պարտաւորվում են չը զօրք գալ իրանց տրված իշխանութեան սահմաններէ։ Նրանք վերահսկող են իրանց յանձնված շրջանի մէջ օրէնքների ճիշդ գործադրութեան, և եթէ իրանք զօրք գալով իրանց իշխանութեան սահմաններից ապօրէն կարգադրութիւններ են անում՝ նոյն օրէնքը ստորագրեալներին իրաւունք է տալիս չը կատարել այդպիսի կարգադրութիւնները, պատճառաբանութիւնը յայտնելով ոչ միայն հրամայողին, այլ և աւելի բարձր ատենախիւ։ Այդ արդար սկզբունքը կոչվում է ПРИНЦИПЪ ЗАКОННОСТІ (а не пассивнаго) повиновения ВЫШИМЪ ВЛАСТЯМЪ։ Եթէ այդ-

րուստը, միայն ի Գիւլէ և Անդօք 673 քիւրդ, 236 հայ, մեծ մասամբ գիւղացիներ և մի քանի հրօսակներ։ Իսպառա կը հասնի հայերու ռազմամթերք։

Օգոստոսի 14.—Քիւրդները բացարձակ կը մերժեն երկարել կռիւն և կը սպառնան օսման նեան զօրքին փաշան պատուիրակներ կուղարկէ Անդօք և սուլթանի կողմէն ամենքին ներողութիւն շնորհել, եղած փնտաւարը պետական դանձէն դարձանել և Սասունը հարկէ ազատ կացուցանել խոտանալով։ Կուղարկել մին, Մուրադ, կը կանչուի Տաւրիկէն, կառավարիչ խաղաղութիւն, յայտնելով թէ առանց հացի և ռազմամթերքի անկարող են երկար դիմադրել։ Գրգոն կը պահանջէ, յայտարարելով թէ՝ օսմանցին չի կարող մոռանալ իր կորուստները, վաղ թէ անագան պիտի աշխատի պատժել մեզ այն օրպէսին, երբ մեր անպատրաստ կը լինինք։ Լաւ է որ այսօր խառնեք մեր արիւն մեր եղբայրներու հետ և գլուխ չը ծռենք անգլոս օտարին։ Շնորհակալ ենք այն բարեբարութեան, որ սուլթան ցոյց կուտայ մեզ, փոխարինել անձնական դանձէն մեր կորուստները։ Հէտացեք մեր երկրէն, խաղաղութիւն ըստ ինքեան տեղի կուենայա։

Օգոստոսի 15.—Փաշան յաջորդ օրը անձամբ 500 հետեւներով կուգայ Անդօքի ստորոտը և կը պահանջէ, որ մի քանի անձինք գան բանակցութեան։ Ռազմամթերքի և հացի բացարձակ չը գոյութիւնը կը ստիպէ գոռող սասունցիները զիջանել բանակցութեան։ Կընտրուին 184 հրացանաձիգներ և կիշներ դաշտ։ Խոսակցութեան պահուն, Գրգոն որ կը գիտէ Անդօքի սարէն այս ամենը, կը տեսնէ զարմացմամբ, որ պորակներու միջից զուղազուղ բանակներ կը պարփակեն գնացողներ և թէ և հրացանի պայթմամբ կազդարարէ նոցա, բայց էլ ոչ էր։ Կը սկսի յուսաւոր և անհղ կռիւ դաշտներով և ստորերով, նոյնպիսիերով։ Ընտանման դիմակներով կը ծածկվի դաշտ։ Երբեք մը թեք քաշած, դաժնակեան անհղ խանջար ձեռքին իրարու ետեւ դիակներ կը փռէ և անվիներ կը յառաջանայ։ Նորա յետեւից կը գալ իր օրդին։ Նոցանից ոչ մի կեն-

տար, այլ ամենը կընդունին նահատակի պսակ, արեամբ ներկված, եռապատիկ թշնամիների դիակներ զորութիւն։

Օգոստոսի 21.—Անդօք կը պաշարուի, գիւղացիք, իշխանցիք և Սեմալի կէսը, կը դիմեն ի Ֆաթեմար. Գրգոն իր չնկցիներով, ալեանցոց և մնացած սեմալցոց հետ կամրանայ իր տեղ, կուղարկել կատաղորէն ամբողջ 6 օր, առանց վտառել, քարերով և խէնջարներով։ Անթուրիւնից յոգնած և ուժաթափ մարտիկներ կընկնին։ Նոցա կը փոխարինեն կանայք, կատաղած բորենիներու նման, որոնց ձագերը յալիշտակել է ուղղւում գայլը։

Օգոստոսի 22.—Անհարին լինելով այլ ևս մնալ անթիւ ու բորիկ, Գրգոն կը յանձնէ Անդօքի պաշարվածութիւն կանանց և ինքը մնացեալ քաշերով, բորիկ, մերկ, անթիւ, ուժաւոր, առանց վտառել, առանց գիւղակի, կիշի խուլի ու խիւսնը գաւառը հաց և պարէն և ըստ կարելոյն ռազմամթերք առնելու նպատակաւ, կանցնի Կէփի, կը հասնի Կէփին։

Օգոստոսի 23.—Մշտական յարձակմանց 24 ժամ շարունակ դիմանալով, սասունցի կանայք բոլորովին ուժաթափ, անկարող անհղ թշնամիներ կընկնին։ Անդօք կը գրաւեն թշնամիներ. կանայք զրկւած մատաղեւում գաւակներ՝ կը մարտնչին ցանուցիւր, քարերով և խէնջարներով և կընկնին վրէժերով ծածկված, ըստմանել տեսարան. բոլոր մնացողներ կը թրատուին անխայ, մանկանց դիակներ կը ձօճին նիզակներու վրայ, կանանց աղիքները սրբու ծայրին։ Յուսահատութիւնն վերին աստիճանի։ Մնացած կանայք երբ կը հասնեն Կէփի, զիրենք չորս կողմէն շրջապատված կը տեսնեն ահագին բազումութեամբ. փախուստ կամ Գրգոնի միանալ անհարին է այլ ևս։ Քիւրդները և զօրքերը կաղաղակեն, որ անհնաւոր լինեն, ապա թէ ոչ կը սպառնան բոլորին բռնաբարել և կոտորել...

Սուլթան, իրարանցում, շիթի, աղաղակ, մանկանց ձեռք երկնից կը թնայանեն, և Կէփի ի-

րէ։ Գրգոն հարձք շաքէ, կուռի մէջ հերոսուհի մը հանդիսացած, խրախուսելով իր ընկերուհիներ, կառավարիչ մանկը, քան թէ անձնատուր լինել ու պատիւը ոտնատակ անել. այդ խօսքերը ասելով, նա հերարձակ, միամեայ մանկիկն ի ձեռքին, կը խոյանայ բարձր ժայրից ցած, Անդօք անդունդի մէջ... Նորա օրինակին կը հետեւին իր ընկերուհիք մի առ մի, առանց արտօրաւոր, առանց շփոթելու, և խեղճ տղայք կը հետեւին իրենց մայրերուն օրինակին, անգիտակցի իրենց վրէժակին։ Կը տեսնեն թշնամին և սարսափած կանգ կանանք, իրարու յետեւ կը թափվին դիակները ձօճելով օդի մէջ, անձայն, անմարտնչ և խոր անդունդը կը ծածկուի դիակներով... Վերջինները կենդանի կը մնան իրենց ջրայրու մարմիններու վրայ... Միայն 50-ի չափ կանայք ձեռքակալուցնին և մի քանի հարիւր մանկիկներ։

Տարուելով փաշայի առաջ կը հրամայեն, որ ընդունեն Մահմեդի օրէնքը. ամենքն անարգանքով կը մերժեն։ Խիստ պատիժներով շատ հարցեր կուտայ տաւորիկցոց, Գրգոն և գիւղացի մասին, սակայն ոչ որ յանձն կուանէ բառ մը իսկ արձակել բերանից, անասելի չարարանք կուտան, մի խօսքով այն, ինչ որ կարող է ստեղծել վայրենի լեռանց գաղաններու վրէժներով կատարված անպաշտպան թշնամու վրայ...

Օգոստոսի 24.—Քաշ Գրգոն իր անպարտելի խմբով ի պարտութիւն կը մատնուի Նիզի սարը, ուստի տեսել էր Անդօքի և Կէփի տեսարանները։ Ալեանցի քաջ վարդան խէնջար ի ձեռքին կը թրատուի մաս առ մաս, հարիւրաւոր վրէժերով ծածկուելին. յետոյ կընկնի անկեղան և դեռ արեւոտ խէնջարը դուրս չի գար նորա ձեռքէն։ Կընկնի իշխանի վարդապետը, մինչ կաղթէր բազմապատեալ, և փորկ գիւղի նորոշածան, արեւն դիակներով ծածկելով իր հետքերը։ Գրգոն վերահար գերի կընկնի, անթուրիւնն ուժաւոր, փաշայի առաջ կը բանայ աչքերը և հաց կուգէ, յանկարծ ինքն իրեն գալով կաղաղակէ։ «Ամօթ քեզ, Գրգո, դու էլ օտարին վրդ պիտի ծռես» և խելով մի զիւրիւր հրացանը կը

յարձակուի փաշայի վրայ։ Կը շողան սուրբեր, կը շալեն հրացաններ և քաջ սասունցիներ գետին կը զրօրվի։

Կռուի հետ և անքը։ Գիւլի 360, Շերիկ 106, Սիմալ 85, Ալեան 165, Իշխան 70, Աղբէն 66 աներով կայրեն ամբողջովին, և ընակիչները բոլորը, բացի մաս մը փախստականներից, սրի կանցուցին։ Շատախի, Բերմի, Խուլի և խեյանու և փաշայի գաւառի բնակիչները, ըստ պետական արձանագրութեանց 146.000 հողի ընդամենը, կը հեծեն սոսկալի և անպատմելի նեղութեանց մէջ։ Բոլոր ալտերին ջիւղերը տիրանալով, գրաւելով աները, կողոպտելով բոլոր ունեցածները, թշուառներու մարմինից խելով մէկ շապիկն էլ, մերկ և անպաշտպան, ցան ու ցիւր կը թողան, որ ուր դան սարերու վրայ վայրի գաղաններու նուաճելու, և իրանի տալով խարոյկի վրայ բարձրացողներուն, զիրենք չըբաղատող կուռ շղթան չի թողներ, որ դոնէ փախուստ տան և ազատին իրենց լոկ անձները։

Նոյն իսկ Մշոյ դաշտի 20 գիւղերը, Խղաղաձ, Տաթրագոմ, Ե. Յովհանու վանքը, Մառնիկ, Խոռուք և այլն պաշարման մէջ են։

Քիւրդներն արդէն Տաթրագոմ գրաւած են և միւսներն կը պահանջեն, որ թողան իրենց տըները, իրենց կալուածքները և տաւարները, երկն երկրէ, ապա թէ ոչ կենսեքներ իզուր տուածելուց յետոյ պիտի յանձնեն այդ ամենը։ Կառավարութեան բողոքներ ի հարկէ անխելի կը մնան։ Մառնիկ բազմապարտաւոր գիւղէն միայն 5000 ոչխար տարուեցաւ։ Մշոյ մէջ խիստ ձերբակալութիւնը, բռնի տաճկացումն, և Կարապետու վանքի երկու սարկաւաղների (Մօլսէս և Յարութիւն) և երեք միաբաններու բռնատարկութիւն։

Կարճ խօսքով, եթէ այսպէս շարունակվի, ամբողջ 200.000 հայեր պիտի ոտնաղլու լինին, առանց կարենալու իսկ իրենց արեւան բողոքը լսելի անել։

Պատմութիւն

պիսի սկզբունքներով չը զեկավարվէր մի պետութիւն՝ նա կը ստեղծէր սարսափելի խառն, նա կը դառնար ասիական անկարգ կառավարութիւն։

Չարմանալի է, որ հանճարեղ Ներսէս Աշտուրակեցին, զեռ նոյն իսկ մինչև Էջմիածինը ռուսաց ձեռքն անցնելը, ձգտում էր այդ սկզբունքներով վերանորոգել մեր եկեղեցական վարչական կազմակերպութիւնը։ Նա զեռ Դանիէլ կաթողիկոսի օրով փորձ փորձեց մի կալէփալի հիմնարկութիւն ստեղծել Էջմիածնում, այն է՝ «սուրբ ժողով» բարձրագոյն խորհրդարանին սրբոյ Էջմիածնայի։ Թիֆլիսում առաջնորդ եղած ժամանակ նա, երբ ստանում էր Էջմիածնից անհամապատասխան կարգադրութիւններ, պատճառաբանութիւններ էր ուղարկում, որոնցով փոխում էր այդպիսի կարգադրութիւնները։

Երբ Էջմիածինը անցաւ ռուսաց ձեռքը, ի հարկէ, մեր եկեղեցական վարչական կազմակերպութիւնը պէտք է ստանար որոշ, օրինական կազմակերպութիւն։ Բացի այն, որ պետական որոշ սկզբունքներ կային, ռուսաց կայսրները ևս մի առանձին սիրով էին վերաբերում հայոց եկեղեցու «հասանդ իրաւանց, արտօնութեանց և սուլթութեան, հայոց ազգի լի ու լի և ճիշդ կամայ»։ Այդպիսի նպատակաւ հանգամանքներում պէտք է նոր կեանք ստանար մեր եկեղեցական վարչական կազմութիւնը, եթէ, տարաբաղաբար, կաթողիկոսական գահը չը բարձրանար Ներսէսի ոխերիմ հակառակորդ՝ ամենաանհաս Յովհաննէս Կարբեցին։

Այսպէս թէ այնպէս, 1836 թվականին լոյս տեսաւ հայոց եկեղեցու գործերի համար Պօթօֆ-Նիան, որի մէջ կ'օլլէր զի ալ սկզբունքը մտցըրվեց իրեն օրէնք, իսկ հնաւանդ իրաւունքները այն չափով մտան, որ չափով կարողացաւ այն ժամանակ հայ հոգեւորականութիւնը ինքն արտայայտել։

Լ.

ՆԵՐՍԵՍ ԳՐԻԳՐԵԱՆԻ ԿԱՅԱՐԱՆՆԵՐ

Վաղուց է արդէն, որ յարուցված է երկրագործական կայսր անհերք հիմնելու խնդիրը Ռուսաստանում, բայց մինչև այժմ գործնական ընթացք չէր ստանում։

1889 թվին Պետերբուրգի ընդհանրիկ ժողովում գումարված գիւղատնտեսները վճիռ կայացրին՝ խնդրել կառավարութիւնից, որ նա բանայ երկրագործական կայսրանքներ Ռուսաստանի ռուսական մասերում, որպէս զի կարելի լինի ռուսական ստանալիք երկրի գիւղատնտեսական պայմանները։

Այդ խնդիրը այժմ այնքան հասունացած է, որ երկրագործութեան միջնորդութիւնը ինքը մշակել է այդպիսի կայսրանքների մի ամբողջ ծրագիր, որ և ներկայացրել է պետական խորհրդի քննութեան և հաւանութեան։

Այդ կայսրանքները առ այժմ պէտք է բացվին երկրագործական դպրոցներին, ֆերմաներին և այլ զբաղմունք նման հիմնարկութիւններին կից, որպէս զի կարելի լինի օգտվել այդ հիմնարկութիւնների զինական ուժերից՝ դիտողութիւններ և փորձեր անելու համար։

Երկրագործական կայսրանքների նշանակութիւնը վաղուց ճանաչված և գնահատված է արեւմտեան Եւրոպայում և գլխաւորապէս Գերմանիայում, որը ներկայումս ծածկված է այդպիսի կայսրանքների մի խիտ ցանցով։ Մի որ և է նոր բոյս, երկրի մշակութեան նոր եղանակ, նոր գործիք, կենդանիների նոր տեսակ, երբ առաջ են գալիս երկրագործական գիտութեան համար, իսկայն յանձնվում է այդ կայսրանքներին և երկրի զանազան մասերում միանգամայն կատարվում են զանազան տեսակ փորձեր, որոնցով կարճ միջոցում է պարզվում է նոր գործի նպատակայարմար և օգտակար լինելը։

Միջնորդութիւնը մտադիր է իր առաջին կայսրանքները հիմնել այնպիսի տեղերում, որոնց պայմանները բոլորովին տարբեր են միմեանից։ Բոյս կայ ուրեմն սպասելու, որ Կովկասում, որի պայմանները շատ տարբեր են Ռուսաստանի միւս մասերից, կը բացվի նոյն իսկ առաջին անգամայն այդ տեսակ մի կայսրանք, որի աջող փորձից յետոյ կը զիւրանայ և միւսների բացումը։

Երկրագործութեան ներկայ միջնորդը Կովկաս եղած ժամանակ յայտնեց իր համակրութիւնը այդ տեսակ հիմնարկութիւններին և խոստացաւ աջակցել նրանց հաստատելուն և Կովկասում։

ՄԱՏՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մենք արդէն առիթ ունեցանք յիշելու, որ այս օրերս լոյս է տեսել մի նոր վեպ՝ «Փեսայ որսողներ» անունով, հեղինակութիւն տիկին Մ. Խատիսեանի։

Հայոց վիպական գրականութիւնը այնքան աղքատ է ինքնուրոյն գրականներով, որ ամեն մի նոր աշխատութիւն այդ ասպարիզում, բնականաբար, գրաւում է իսկայն մեր ուշադրութիւնը և ի՞նչ է այդ աշխատութիւնը համապատասխանում է գեղարուեստի նոյն իսկ ամենաթերթն պահանջներին, մենք ներողամիտ աչքով ենք նայում նրա այս և այն թերութիւններին վրա։

Անհրեղի իրողութիւն է, որ մեր վիպական գրականութիւնը այժմ գուրկ է աչքի ընկնող տաղանդներից և կարծէք զեռ երկար ժամանակ նա պէտք է դուրս չը գայ իր խղճով վիճակից։

Ահա այդ ընդհանուր վիպական աղքատութեան տեսակետից մենք կարեւոր ենք համարում մի փոքր երկար կանգ առնել այս նոր վեպի վրա, մասնաւորապէս որ հեղինակը կին է, — մի բացառիկ երեւոյթ մեր գրականութեան մէջ։

«Փեսայ որսողներ» հեղինակը լայն ծրագրի ետեւից չէ ընկել և իրան նպատակ չէ դրել մի որ և է ընդհանուր խնդրի լուծումը։ Նա պարզապէս վերցրել է հայկական, այն ևս գլխաւորապէս թիֆլիս քաղաքի հայ հասարակութեան կեանքից մի քանի երեւոյթներ և գծեր, աշխատել է նկարաբարբել այդ կեանքը այնպէս, ինչպէս կայ Նա մինչև անգամ խոյս է տալիս նկարագրելու կեանքի այդ երեւոյթների զարգացումն պատճառները, նրանց պատմութիւնը, այլ շատանում է արձանագրելով իրողութիւնը, միայն վեպի ձևով։ Այդ տեսակետից տիկին Խատիսեանի վեպը անհաջող չէ և կարողացել է հետաքրքրութեամբ, մանաւանդ որ մի քանի տեսարաններ շատ ճիշդ են նկարագրված։

Վեպի բովանդակութիւնը հետեւեալն է։ Թիֆլիսում ապրում է Գնունիների ընտանիքը։ Պետր Արտէմիչ Գնունին, մի պաշտօնավոր չի, ունի իր, կարողացել է իր ծառայութեան ժամանակ, զանազան միջոցներով, որոնց մէջ վերջին տեղը չէ բռնել և կաշառակերութիւնը, մի փոքր դրամազուլի դիզել, որի տոկոսներով և ստացած պէնսիայով ապրում է նրա ընտանիքը՝ Նրա կինը, Նատալիա Սերգեյեւնա, միշտ եւեմուտ է անում արիւտակրատիկական շրջանների մէջ և նրա կեանքի միակ հոգն է — սպանական կրթութիւն տալ իր աղջիկ Սոնային, և ապա նրա համար մի չաղ զանազան ծախսեր։ Աղջիկը հիշք իր սաղնական կրթութեան պատճառով ամեն կերպ աշխատում է ամուսնութեամբ beau-monde-ի մէջ մտնել և աչքը դրազուն իշխան Ալբրտովի վրա է, թէն դեպի նրան սէր չէ դուրս իր կողմից, իշխան Ալբրտովը, թէն նրան շատ դուր է գալիս Սոնան, բայց որովհետեւ նա դրամափոր չունի, ուստի նա ամուսնանում է մի տղեղ հարուստ աղջկայ հետ, որին ընտ չէ սիրում։

Վեպի գլխաւոր հետաքրքրութիւնը կենտրոնացած է Սոնայի և Ալբրտովի վրա, իբրեւ ժամանակակից հայ հասարակութեան մէջ տիրող հայեացքների, ներկայացուցիչների վրա։ Սոնան սովորել է լաւ ապրել, ուսել, խմել, հագնել, նա չունի այնքան բարոյական ոյժ, որ կեանքի երջանկութիւնը այդպիսի բաների մէջ չորոնէ, այդ պատճառով էլ ի վերջոյ նա ամուսնանում է մի պատու հարուստի հետ, որին ատելով աւուր է, հիշեց այն ժամանակ, երբ զգում է, որ կարող է աւելի երջանիկ ապրել մի համակրելի երիտասարդի՝ Տէր Անդրէասեանի հետ որի հետ, նշանվել էր, երբ նա հարուստ էր։ Տէր-Անդրէասեանը կորցնում է իր հարստութիւնը և Սոնան դերադասում է աւելի, բայց հարուստ մարդու հետ ամուսնանալ, քան սիրելի, բայց աղքատ մարդու հետ։

Իբրեւ հակապատկեր Սոնայի և Ալբրտովի, հեղինակը դուրս է բերել և երկու ուրիշ տիպեր, վարժուհի Վարվարան և երիտասարդ Լուսինը։ Սոնայը այլ չը շրջանում են մեծացել, այլ կրթութիւն են ստացել, ուստի երբ դրում են փոխադարձ սէր, չը նայելով, թափ է վարվարան աղքատ աղջիկ է և թէ ինքն Լուսինը աղքատ է միայն իր մտաւոր աշխատանքով, բայց այդ հանգամանքը նրանց յետ չէ պահում ամուսնանալուց։ Թէ Սոնայի և թէ Ալբրտովի տիպերը այն տվորական տիպերից են, որոնցով վիպում է թիֆ-

լիսի հասարակութեան կեանքը։ Անհանգիստ չեն և վարվարայի ու Լուսինի տիպերը, որոնք թէն հաղուագիւտ, բայց դարձեալ գոյութիւն ունեն մեր կեանքի մէջ։

«Փեսայ որսողներ» վեպի գլխաւոր առարկան այդ չորս տիպերի նկարագրութիւնն է, ուստի և մի քանի երկրորդական տիպեր անցնում են բոլորովին աննկատելի։

Գնեք կարող լուծեան տալ մի գիծ, որ մեզ բոլորովին անհանգիստ է երևում վեպի վերջը նկարագրվում է մի տեսարան, որտեղ Սոնան արդէն հանդիսանում է իբրեւ մի կտրի կին, որ չէ քաշվում ցոյց տալ իր սիրային յարաբերութիւնները զանազան լուրջանների հետ, և ահա նրա մայրը, Նատալիա Սերգեյեւնա, ամեն կերպ օգնում է իր աղջկան խաբել իր ծեր ամուսնուն և զուարճանալ իր սիրելիանների հետ։

Գիտար թէ մի հայ կին, մի մայր կարողանար այդ տեսակ հիշաւոր դեր կատարել և դիտմամբ անբարոյականացնել իր աղջկան։

Գալով լեզուին պէտք է առնել, որ շատ թեւրթիւթիւններ ունի, բայց այդ հանգամանքը պէտք վերագրել հայ թարգմանչին, որովհետեւ վեպի ըրնագիրը, ինչպէս հաստատ գիտենք, գրված է ռուսերէն։

Ա.

ՆԵՐՍԵՍ ԼՈՒՐԵՐ

Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաւիչի անուանակոչութեան առիթով, թիֆլիսի քաղաքագլուխը, նոյնմբերի 8-ին շնորհաւորական հեռագիր ուղարկեց Նորին Բարձրութեան՝ թիֆլիս քաղաքի կողմից, և ստացաւ հետեւեալ պատասխանը. «Սննդեղ շնորհակալ եմ սիրովի հեռագրի համար»։

Մեզ հաղորդում են երեսնից, որ նահանգապետ հաղորդել է վեհափառ Կաթողիկոսին, թէ թիւրքահայ գաղթականներին թող է տրված այս ձեռք ևս մնալ Ռուսաստանի սահմաններում, Կովկասի մէջ։

Մենք անցաւ անգամ հաղորդեցինք, որ թիւրքաց կառավարութիւնը մտադիր է քննիչներ ուղարկել Մուշի կողմերը՝ այնտեղի դէպքերը տեղեկագրելու համար։ Մեր այդ լուրը հաստատվում է Լոնդոնից ստացած մի ուրիշ հեռագրով, որի մասին Պետերբուրգից հեռագրում է «Новое Обозр.» լրագրի թղթակիցը։ Այդ հեռագրի մէջ ասված է հետեւեալը. «Թիւրքաց սուլթանը մի յանձնաժողով նշանակեց, որը պէտք է տեղն ու տեղը քննի այն անկարգութիւնները, որ քուրդերը կատարում են Հայաստանում»։

Այսօր, նոյնմբերի 12-ին, Կարապետ Տիեաչեանի նուիրած գումարից՝ ուղարկեցինք Կարսի շրջանի Փրեմիալի գիւղի հայոց դպրոցին 300 ռուբլի, այդ դպրոցի հաղաբարձութեան կողմից մեզ ուղարկած հասցեով։

Լուսն ենք, որ թիֆլիսի Հաւաքար թաղի հայ թահանները դրաւոր բողոք են տուել թիֆլիսի առաջնորդին, գործակալ Համադասալ թահանայ Տէր-Յովհաննիսեանի դէմ։

Մեզ հաղորդում են, որ Սիմէոն Պառաւեան զանգատ է տուել նահանգական դատարանին «Քրճագանքի» խմբագրի Յովհաննիսեանի դէմ, մեղադրելով նրան զրպարուողութեան մէջ, իր լրագրի միջոցով։

Մեզ հաղորդում են, որ Արսէն վարդապետ Վլադիմիր զանգատ է տուել թիֆլիսի նահանգական դատարանին, թիֆլիսում հրատարակվող անհանգիստ թերթի խմբագրի դէմ, մեղադրելով նրան զրպարուողութեան մէջ, իր թերթի միջոցով։

«Վաղիմիր» շոգնաւի խորտակման դարձի դատարանական քննութիւնը աւարտվեց, և Օղէսայի նահանգական դատարանի վճռով Կրիստ և Օղէս կապիտանները մեղաւոր են ճանաչված և դատապարտված են բարձր պատժի, այն է չորս ամսվայ բանտարկութեան և եկեղեցական ապաշխարանքի՝ իւրաքանչիւրը Գաղաքացիական պահանջներին բաւարարութիւն է տրված շատ պակասեցրած չափերով։ Վճռված է տալ Գրոսնիկ-

ներին 40,000 ռ., Կովչինովային — 25,000 ռ., Թումանովին — 10,000 ռ. և Տէրեմովին — 5000 ռ. իսկ Թումանովի 250,000 ռ. պահանջը, և «Ռուսաց ընկերութեան» 250,000 ռ. պահանջը «Կոլումբիա» շոգնաւի տէրերից, մերժված են։ Պահանջված գումարի մեծ մասը վճռված է առնել «Ռուսաց ընկերութիւնից», փոքր մասը երկուսից ևս, միմեանց փոխադարձ պատասխանատուութեամբ։ Վերջնական վճիռ կը յայտնվի նոյնմբերի 18-ին։

Գատառանական օրէնսդրութեան վերաքննութեան համար կազմված յանձնաւորովը, արդարապատուութեան միջնորդի նախագահութեամբ, կը սկսի իր զբաղմունքները նոյնմբերի 20-ից։

ԲԱԳՈՒՅ հեռագրում են «Кавказ» լրագրին, որ նախագահները թողնելի խորհրդի նախագահ է ընտրված Ղուկասով։

ԿԱՐՍԻՑ մի պարոն (Ալեքսանդր Չ... աղագահունը անկարող եղանք կարգաւ) խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Բոյս հարսանքի առիթով ռուսաւարանին տուած 10 ռուբլի նուէրը առիթ է տուել «Մշակի» այստեղի լրատուներից մէկին այդ իրողութիւնը հեղսօրէն յիշելու, որպէս հետեւեալ մեր չնչին մասնակցութեան և անտարբերութեան դէպի հասարակական հիմնարկութիւնները։ Նպատակ չունենք մեզ արգարացնելու, սակայն թող տուէք նկատել, որ մենք երբեք մեզ հեռու չենք պահել հասարակական գործերից։ Մեր մասնակցութիւնը յայտնի պէտք է լինէր ռուսաւարանի վարչութեան և լրատուին, իսկ եթէ մենք մեր ուրախութեան ժամանակ անգամ չենք մոռացել մեր քաղաքացիական պարտքը, և նուիրել ենք մեր յարգած հիմնարկութեան որ և է գումար, միթէ արդարացի էր կշեռքի և չափի տալ դնել մեր նուէրը»։

ՎԱՐՍԱԿԱՍԻՑ, հայոց դպրոցի հաղաբարձու Գ. Աղադադեան խնդրում է մեզ տպել հետեւեալը, «Թող տուէք ձեր լրագրի միջոցով յայտնել մեր խորին շնորհակալութիւնը բազմեցի Համաբարձու Մէլիքեանցին, որը ուստ զալով Էջմիածին՝ նուիրեց մեր եկեղեցական ծխական երկսեռ դպրոցներին 50 ռուբլի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԱՅԻՑ

Շուտագարտ, նոյնմբերի 2-ին

Գարձեալ մի աւետարել լուր, որ ցնծութեան աղաղակներ յարուցեց ամեն տեղ։ Գիտութիւնը այս օրերս մի մեծ բայլ արեց դէպի առաջ, մի նշանաւոր գիտ, որ ընդհանուր մարդկութեան միջոց է տալիս կուռելու իր մի կատաղի, աւերել, մինչև օրս անյաղկելի թշնամու դէմ։ Դա դիֆտերիան է — երկխոսիկ մահվան հրեշտակը, որի դէմ բոլ. Բերնը հնարել է Բերլինում ինչ որ արխային հեղուկ, որը բժշկների դորձադուութեամբ ժամանակի ընթացքում անկասկած մեծ աջողութիւն պէտք է ունենայ։ Սկզբում դիտահանների շրջանը խիստ տարակուսանքով էր վերաբերվում դէպի նոր բուժիչ միջոցը։ Կօլի դէպքից յետոյ մարդիկ խառնվել են. այժմ այնքան էլ հնա չէ ընդունվում որ և է նոր դիտու։ Սա կայն օրից օր բազմանում էին նպատաւոր տեղեկութիւնները, գիտնական աշխարհից անընդհատ լսվում էին ձայներ, որ հաստատում էին նորահար հիւթի փայլուն, անհրեղելի աջողութիւնը։ Եւ այսօր Բերլինի գիտն ու մանկաբան փաստ լինելով, բարեբաղաբար այլ ևս տեղի չի ունենայ Կօլի «tuberkulin»-ի հիւսթաիոթիւնը։

Թող ուրեմն խնդալ ժողովուրդը, ուրախանան ծնողները. նրանց մանուկները այսուհետ աղաւտ են այն զարհուրելի վտանգից, որ Գամպիլեսեան արի նման ամեն օր, ամեն ժամ ճոճվում էր նրանց գլխի վրա։

Սակայն աղքատ ժողովուրդը, այն ժողովուրդը, որը զբաղական միջոցներ չունի, շատ էլ չը պէտք է ուրախանայ։ Սկզբում ինչ որ անորոշ շշուկներ էին տարածվել, իբր թէ սպառնալու վրա է պատրաստի բժշկարար հիւթը, որ Բերլինը մատակարարել էր բուժարաններին։

Այսպէս հետզհետ օրոշ կերպով յայտարարվեց, որ հիւսթանոցներում հեղուկը բոլորովին սպառ-

Типографія Канцел. Главнотач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.